ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021 թվականի

Դեկտեմբերի 29-ին կայացած գիտական խորհրդի նիստի

Օր ակ ար գ ո ւ մ՝

1. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում։
2. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի մասին (նախապաշտպանության ընթացքը ֆակուլտետում)։
3. Թեմաների հաստատում։
4. Գևորգ Արշակյանի անվան փիլիսոփայական հետազոտությունների երիտասարդական կենտրոն հիմնելու մասին։
5. Ընթացիկ հարցեր։

1 Ֆակուլտետի դեկան՝ պ-ն Ա. Բաղդասարյանը գիտխորհրդի անդամների հետ քննարկեց ընթացիկ քննությունների անցկացման հարցը։ ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի ներկայացուցիչներին ևս տեղեկացրեց, որ այն ուսանողները, ովքեր չեն վճարել ուսումնական վարձերը և տեղեկագրերում նշված է (*չթ),* առանց ԲՈՒՀ-ի ռեկտորի որոշման թույլ չտալ մասնակցելու քննություններին։ Պահանջեց նաև խստորեն վերահսկել ուսխորհրդի ներկայացուցիչների կողմից ընթացիկ քննությունների արտագրությունները։ Բաղդասարյանը քննարկեց նաև ուսանողների մասնակցության հարցը հետազոտական բաղադրիչով առարկաներին։

Ամբիոնի վարիչ՝ Գ. Շահվերդյանը ևս քննարկման հրավիրեց միջանկյալ քննությունների հարցը։ Իրենց մտահոգությունը, moodle հարթակում, քննություններ անցկացնելու վերաբերյալ հայտնեցին փիլիսոփյության ամբիոնի դասախոսներ՝ Ս. Պետրոսյանը և Հ. Հովհաննիսյանը։

Ամփոփելով առաջին հարցը, Ա. Բաղդասարյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում նոր հայեցակարգ կունենանք։

2 . Ա. Բաղդասարյանը իրազեկեց, որ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի նախապաշտպանությանը իրավունք ունեն մասնակցելու այն ուսանողները, ովքեր կատարել են ուսումնական վճարները և ունեն լիարժեք ավարտուն աշխատանք։ Ծանոթացրեց նաև չպաշտպանած ուսանողների համար վճարման կարգին, ինչպես նաև քննարկվեց առարկայական տարբերությունների, 12 կրեդիտի պարագայում դասախոսների վճարման հարցը։

Ավելի հստակ այն պատկերացնելու համար առաջարվեց ուսումնական վարչությունից հրավիրել մասնագետի, ով կծանոթացնի գործող կարգի վճարի հիմքերին։

3 Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ՝ Հ. Ավանեսյանը ներկայացրեց ամբիոնում քննարկված ատենախոսությունների թեմաները.

1 ՀՖԿՍՊԻ հիմնադրամի, Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Կարինե Ժորայի Հակոբյանի

2 ԵՊՀ, ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ Արմինե Գմյուրի

3 ՀՖԿՍՊԻ հիմնադրամի, Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Մելինե Հրաչյայի Հովհաննիսյանի

4 ՀՖԿՍՊԻ հիմնադրամի, Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Գոհար Աշոտի Գասպարյանի

5 ԵՊՀ, ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ Մառա Համլետի Հարությունյանի։

Գիտական խորհուրդը առաջարկեց հաստատել թեմաները վերնագրերում որոշ փոփոխություններ կատարելուց հետո։

Քննարկվեց նաև «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի 12-րդ համարի տպագրության երաշխավորման հարցը։ Այն անցավ միաձայն։

4 Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Գևորգ Արշակյանի անվան փիլիսոփայական հետազոտությունների երիտասարդական կենտրոն հիմնելու մասին հարցը։ Նշվեց, որ Գ. Արշակյանը եղել է ֆակուլտետի լավագույն ուսանողներից, սովորել և ավարտել է սոցիոլոգիայի, իրավաբանության ֆակուլտետները։ Այնուհետև ընդունվել է փիլիսոփայության բաժնի մագիստրատուրա և որպես կամավոր մեկնել պատերազմ։ Ա. Բաղդասարյանը Նշեց, որ կա ֆինանսավորում ԵՊՀ հիմնադրամի, տարբեր կազմակերպությունների կողմից։ Այսպիսով կպահվի իր հիշատակը և կծառայի այն ուսանողների համար որպես ուսումնական կենտրոն։

5 Քննարկվեցին ընթացիկ հարցեր։

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան



Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան